Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանը. միջսահմանային կապերի ամրապնդում

Նախագծերի ներկայացման հրավեր

Հունիս 2026

Ամփոփագիր

Հրավիրում ենք Հայաստանում և Թուրքիայում գրանցված հասարակական կազմակերպություններին և բիզնես ընկերություններին ներկայացնել գործնական, արդյունքահեն ծրագրային առաջարկներ, որոնք կնպաստեն Հայաստանի և Թուրքիայի միջև տնտեսական կապերի ու համագործակցության զարգացմանը, նոր կապերի ու գործընկերությունների ձևավորմանը և Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացի առաջմղմանը: Այս նախաձեռնությունը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Առաջարկվող նախագծերը պետք է նպաստեն ծրագրի՝ ստորև ներկայացված ակնկալվող արդյունքներից առնվազն մեկին՝

Տնտեսական կապերի ամրապնդում. նոր առևտրային ուղիների ձևավորում, բիզնես գործունեությունը կարգավորող կանոնների մշակում, նոր շուկաներ մուտք գործելու հնարավորությունների ստեղծում՝ միտված երկու երկրներում զբաղվածության և տնտեսական աճի խթանմանը:

Համագործակցության ընդլայնում. համատեղ նախաձեռնությունների, մասնագիտական ցանցերի կամ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև գործընկերությունների ձևավորում, որոնք կշարունակվեն նաև ծրագրի ավարտից հետո:

Մարդկանց միջև շփումների և փոխվստահության ամրապնդում. համայնքային նախաձեռնությունների, մշակութային փոխանակումների կամ տեղական մակարդակում իրականացվող միջոցառումների միջոցով փոխվստահության և փոխըմբռնման խթանում:

Իրազեկում և հանրային ընկալումների փոփոխություն. շահերի պաշտպանության (advocacy) արշավների կամ համատեղ մեդիա նախաձեռնությունների իրականացում, որոնք կնպաստեն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման և համագործակցության վերաբերյալ ավելի կառուցողական հանրային ընկալումների ձևավորմանը:

Մենք առաջնահերթություն կտանք այն նախագծերին, որոնք կապահովեն տեսանելի արդյունքներ, օրինակ՝

- *Նոր բիզնես գործընկերությունների ձևավորում*
- *Մշակութային ժառանգության հուշարձանների վերականգնում*
- *Կայուն և ակտիվ միջսահմանային ցանցերի ստեղծում*
- *Համայնքային նախաձեռնություններ՝ տեսանելի և անմիջական արդյունքներով:*

Ստորև ներկայացնում ենք մի քանի օրինակ, որոնք կօգնեն ձեզ հասկանալ, թե ինչպիսի նախաձեռնություններ ենք ակնկալում (խնդրում ենք նկատի ունենալ, որ օրինակները նպատակ չունեն ուղղորդել ձեզ գաղափարների մշակման գործընթացում և չեն սահմանափակում հնարավոր առաջարկների շրջանակը): Մենք ողջունում ենք ծրագրի նպատակներին և ակնկալվող արդյունքներին համապատասխանող բոլոր ստեղծարար և նորարարական առաջարկները:

- **Աջակցություն միջսահմանային բիզնես համագործակցությանը** (օրինակ՝ համատեղ նախաձեռնություն զբոսաշրջության, գյուղատնտեսական արտադրանքի արտահանման կամ տեխնոլոգիական ոլորտներում),
- **Երկխոսության ֆիզիկական կամ թվային հարթակների մշակում** (օրինակ՝ երիտասարդական փոխանակումների համար երկլեզու առցանց հարթակ, Հայաստան-Թուրքիա սահմանակից համայնքներում մշակութային/երիտասարդական կենտրոնի ստեղծում, շրջիկ լուսանկարչական ցուցահանդես):
- **Երկարաժամկետ համագործակցության ցանցերի ստեղծում** (օրինակ՝ Հայաստանի և Թուրքիայի փոքր ու միջին ձեռնարկատերերին միավորող գործարար հարթակ, կանանց ձեռներեցության մենթորության ծրագիր կամ համատեղ բովանդակություն ստեղծող մեդիա նախաձեռնություն):
- **Համայնքահեն լուծումների և նախաձեռնությունների խթանում** (օրինակ՝ արհեստների տոնավաճառ սահմանակից համայնքներում,

շրջակա միջավայրի պահպանության համատեղ նախաձեռնություն կամ երիտասարդների համար սպորտային մրցաշարեր)։

Համատեքստ

Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունները մտնում են նոր հնարավորությունների շրջան։ Վերջին տարիներին երկու երկրների միջև դիվանագիտական շփումները և տարածաշրջանային զարգացումները համագործակցության ընդլայնման նոր հնարավորություններ են ստեղծել։ Միևնույն ժամանակ, տասնամյակներ շարունակ փակ սահմանները, սահմանափակ շփումները, միմյանց մասին կարծրացած պատկերացումները, պատմական տրավման և Ղարաբաղյան հակամարտության վերջին ցավալի զարգացումները շարունակում են ազդել փոխադարձ ընկալումների վրա և խոչընդոտում են հասարակությունների միջև վստահության ձևավորմանը։

Այս ծրագիրը նպատակ ունի նոր հնարավորությունները վերածել գործնական համագործակցության և կայուն կապերի։ 18 ամսվա ընթացքում ծրագիրը համախմբելու է Հայաստանի և Թուրքիայի գործարարներին, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, լրագրողներին, երիտասարդներին, արվեստագետներին, հետազոտողներին և այլ մասնագետներին՝ ընդհանուր հետաքրքրությունների շուրջ աշխատելու, նոր գործընկերություններ ձևավորելու և մարդկանց միջև կապերն ամրապնդելու նպատակով։

Ծրագիրը կառուցված է այն պարզ գաղափարի վրա, որ կայուն կարգավորումը պահանջում է ավելին, քան քաղաքական երկխոսությունը։ Այն նաև հիմնվում է մարդկանց, կազմակերպությունների և համայնքների միջև կանոնավոր փոխգործակցության վրա, որը կարող է ձևավորել ընդհանուր շահեր, խորացնել փոխըմբռնումը և ստեղծել շոշափելի օգուտներ երկու երկրների համար։

Ծրագրի կարևոր բաղադրիչներից մեկը **Դրամաշնորհային մրցույթն է**, որի միջոցով Կոնսորցիումը հնարավորություն է ստանում ներգրավել դերակատարների ավելի լայն շրջանակ՝ ծրագրի նպատակներին ու արդյունքներին հասնելու, ինչպես նաև ծրագրի ազդեցությունն ընդլայնելու համար։

Դրամաշնորհային մրցույթը հնարավորություն է տալիս արձագանքել ինչպես երկարաժամկետ համագործակցության կարիքներին, այնպես էլ Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին, տարածաշրջանային համագործակցությանը և կապերի ամրապնդմանը նպաստող նոր հնարավորություններին։

Դրամաշնորհային մրցույթի **ընդհանուր ֆոնդը կազմում է 455,000 եվրո**։

Առաջարկվող նախագծերի բյուջեն կարող է կազմել **10,000-ից մինչև 60,000 եվրո**, նախագծերի առավելագույն տևողությունը՝ **11 ամիս:**

Ծրագիրն իրականացվում է Հայաստանի և Թուրքիայի քաղաքացիական հասարակության կազմակերպություններից կազմված Կոնսորցիումի կողմից, որի անդամները փոխլրացնող փորձառություն և մասնագիտական կարողություններ ունեն տնտեսական զարգացման, քաղաքականությունների ուսումնասիրության, քաղաքացիական հասարակության ներգրավման և երկխոսության խթանման ոլորտներում.

● Եվրասիա համագործակցություն հիմնադրամ (ԵՀՀ)
● Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն (ՀԱԳՄ)
● Հրանտ Դինք հիմնադրամ (HDF)
● Թուրքիայի տնտեսական քաղաքականության հետազոտությունների հիմնադրամ (TEPAV)

Համատեղելով իրենց փորձն ու կարողությունները՝ կոնսորցիումի անդամները նպատակ ունեն ստեղծել համագործակցության նոր հնարավորություններ, ամրապնդել միջսահմանային կապերը և նպաստել Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կայուն կարգավորմանը:

Ծրագրի հիմնական չորս նպատակներն են.

- Մշակել Հայաստանի և Թուրքիայի միջև տնտեսական համագործակցության հնարավորությունների փաստահեն տեսլական՝ նպաստելով երկու երկրների միջև երկարաժամկետ և փոխշահավետ տնտեսական գործընկերությունների ձևավորմանը:
- Համախմբել և կարգավորման գործընթացում ներգրավել Հայաստանի և Թուրքիայի կարևոր դերակատարներին ու կառույցներին՝ տնտեսական և միջսահմանային համագործակցության զարգացման նպատակով:
- Ներգրավել հասարակական կազմակերպություններին, երիտասարդական և կանանց խմբերին համատեղ նորարարական նախաձեռնություններում, որոնք նպաստում են փոխվստահության ամրապնդմանը և հարաբերությունների կարգավորման վերաբերյալ հանրային ընկալումների դրական փոփոխությանը:
- Իրականացնել ռազմավարական հաղորդակցման և հանրայնացման նախաձեռնություններ՝ որոշում կայացնողների, բիզնես համայնքի ներկայացուցիչների և քաղաքացիների շրջանում համագործակցության առավելությունների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով

Ովքեր կարող են դիմել

Մրցույթին կարող են դիմել Հայաստանում և Թուրքիայում գրանցված հասարակական կազմակերպությունները, հիմնադրամներն ու շահույթ չհետապնդող այլ կառույցներ: Կոնսորցիումը կարող է դրամաշնորհ տրամադրել նաև առևտրային կազմակերպություններին (օրինակ՝ մեդիա կազմակերպություններ, բժշկական կենտրոններ, բիզնես խորհրդատվական ընկերություններ և այլն), եթե վերջիններիս կողմից ներկայացված առաջարկները նպաստում են ծրագրի նպատակներին և ակնկալվող արդյունքներին և չեն օգտագործվում բացառապես շահույթ ստանալու նպատակով:

Հայտատուները պետք է ունենան պաշտոնական գրանցում Հայաստանում կամ Թուրքիայում: Նախապատվությունը կտրվի այն հայտերին, որոնք նախատեսում են Հայաստանի և Թուրքիայի կազմակերպությունների ու անհատների միջև գործընկերություն ու կապերի ստեղծում:

Առաջարկվող նախագծերի գործողությունները պետք է իրականացվեն Հայաստանում, Թուրքիայում կամ երկու երկրներում միաժամանակ: Նախագծի իրագործման համար այլ վայրեր առաջարկելու դեպքում հայտատուները պետք է հիմնավորեն դրա անհրաժեշտությունը:

Ֆինանսավորման ենթակա ծախսեր

Դրամաշնորհի շրջանակում կարող են ֆինանսավորվել ծրագրի իրականացման հետ անմիջականորեն կապված հետևյալ ծախսերը. **(ա)** ծրագրի անձնակազմի աշխատավարձեր (օրինակ՝ ծրագրի ղեկավար, համակարգող, հաշվապահ և այլն), տեղական և/կամ միջազգային փորձագետների հոնորարներ, **(բ)** հաղորդակցության ծախսեր (հեռախոսակապ, ինտերնետ և այլն), **(գ)** գործուղումների և ճանապարհորդությունների ծախսեր (տրանսպորտ, կեցություն, սնունդ, ճանապարհորդական ապահովագրություն և այլն), **(դ)** ծրագրի իրականացման համար անհրաժեշտ սահմանափակ քանակությամբ սարքավորումների, ծրագրային ապահովման և գրասենյակային պարագաների ձեռքբերում, **(ե)** հետազոտությունների, հարցումների, թարգմանությունների և հրապարակումների հետ կապված ծախսեր, **(զ)** միջոցառումների, հանդիպումների կամ համաժողովների անցկացման համար անհրաժեշտ տարածքների, թարգմանչական սարքավորումների և հարակից ծառայությունների վարձակալություն, **(է)** ծրագրի իրականացման հետ անմիջականորեն առնչվող այլ ծախսեր:

Համաֆինանսավորում

Մրցույթի շրջանակում հնարավոր է ստանալ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ամբողջ ֆինանսավորումը, սակայն մենք ողջունում ենք նաև այլ աղբյուրներից ֆինանսական աջակցության ներգրավումը: Դրամաշնորհ կարող է տրամադրվել նաև այն նախագծերին, որոնք արդեն մեկնարկել են կամ պիտի մեկնարկեն մոտ ապագայում և ֆինանսավորվում են Եվրոպական միությունից անկախ այլ աղբյուրների կողմից: Եթե ձեր հայտը վերաբերում է դեռևս չմեկնարկած նախագծի համաֆինանսավորմանը, ապա անհրաժեշտ է **ա)** հայտում նշել ֆինանսավորման մյուս հաստատված կամ ակնկալվող աղբյուրը, **բ)** հստակ ներկայացնել և հիմնավորվել այս մրցույթի շրջանակում ակնկալվող ֆինանսավորման աջակցության նպատակը, չափը և օգտագործման ուղղությունները, **գ)** ծրագրի իրականացման ընթացքում ապահովել Եվրոպական միության և Կոնսորցիումի տեսանելիությունը՝ որպես դոնոր:

Հայտերի ներկայացման և ընտրության գործընթացը

Դրամաշնորհային մրցույթը բաց է **2026 թվականի հունիսի 19-ից** մինչև **հուլիսի 30-ը**:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետից առաջ Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ) կկազմակերպի առցանց տեղեկատվական հանդիպումներ՝ հետաքրքրված հայտատուների համար (տեղեկատվական հանդիպումներին մասնակցության պայմանները ներկայացված են «Մրցույթի հիմնական պայմանները» բաժնում):

Տեղեկատվական հանդիպումների ընթացքում կներկայացվեն հայտերի մշակման և ներկայացման ընթացակարգերը և մասնակիցներին կտրամադրվեն անհրաժեշտ պարզաբանումներ մրցույթի պայմանների, նախագծերի մշակման, բյուջետավորման և իրականացման գործընթացի վերաբերյալ:

ԵՀՀ աշխատակիցները կուսումնասիրեն հայտերը՝ ստուգելով դրանց համապատասխանությունը մրցույթի տեխնիկական պահանջներին (հայտի լեզու, հայտատուի համապատասխանություն, նախագծի տևողություն և իրականացման վայր, ակնկալվող ֆինանսավորման չափ, հայտադիմումի ամբողջականություն և այլն), ինչի արդյունքում հայտերը կա՛մ կմերժվեն, կա՛մ կանցնեն գնահատման հիմնական փուլ:

Հիմնական փուլում հայտերը կգնահատվեն Ընտրող հանձնաժողովի կողմից՝ ստորև ներկայացված գնահատման չափանիշներին համապատասխան: Հանձնաժողովի կազմում կընդգրկվեն Կոնսորցիումի բոլոր անդամ կազմակերպությունների և Եվրոպական միության ներկայացուցիչները:

Անհրաժեշտության դեպքում Կոնսորցիումի անդամները կարող են համագործակցել ընտրված հայտատուների հետ՝ ծրագրային գաղափարները լրամշակելու և ավելի կենսունակ ու ազդեցիկ նախագծերի վերածելու նպատակով:

Գնահատման չափանիշները

Ներկայացված առաջարկները կգնահատվեն հետևյալ չափանիշների հիման վրա.

ա) Համապատասխանություն ծրագրի նպատակներին և ակնկալվող արդյունքներին (30 միավոր). որքանո՞վ է առաջարկվող նախագիծը նպաստում ծրագրի նպատակներին և ակնկալվող արդյունքներին:

Ուղղորդող հարցեր.

- Արդյո՞ք նախագիծը համապատասխանում է սույն մրցույթի առաջնահերթություններին:
- Արդյո՞ք նախագիծը նպաստում է Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացի առաջմղմանը՝ տնտեսական համագործակցության, հանրային ներգրավվածության, երկխոսության և կամ փոխվստահության ամրապնդման միջոցով:
- Արդյո՞ք նախագիծը նպաստում է ծրագրի ակնկալվող արդյունքներից առնվազն մեկի իրագործմանը:

բ) Միջսահմանային գործընկերության որակ և բովանդակություն (40 միավոր). որքանո՞վ է նախագիծը նպաստում Հայաստանի և Թուրքիայի միջև բովանդակալից և արդյունավետ համագործակցության ձևավորմանը:

Ուղղորդող հարցեր.

- Արդյո՞ք նախագծում ներգրավված են գործընկերներ ինչպես Հայաստանից, այնպես էլ Թուրքիայից:
- Արդյո՞ք Հայաստանի և Թուրքիայի գործընկերները հավասարապես ներգրավված են ծրագրի պլանավորման, որոշումների կայացման և իրականացման գործընթացներում:
- Արդյո՞ք առաջարկվող համագործակցությունը կարող է վերաճել ավելի կայուն գործընկերության ծրագրի ավարտից հետո:

գ) Կազմակերպական կարողություններ և իրագործելիություն (10 միավոր). որքանո՞վ է նախագիծը իրատեսական և իրագործելի:

Ուղղորդող հարցեր.

- Արդյո՞ք դիմող կազմակերպությունն ունի բավարար տեխնիկական ռեսուրսներ ու կառավարման կարողություններ նախագիծն իրականացնելու համար

- Արդյո՞ք առաջարկվող գործողություններն իրատեսական են նախատեսված ժամանակահատվածի և բյուջեի շրջանակում։
- Արդյո՞ք դիմող կազմակերպության ծրագրային թիմն ունի նախագիծն իրականացնելու համար անհրաժեշտ փորձն ու մասնագիտական գիտելիքները։

դ) Կանանց և երիտասարդների ներգրավվածություն և ներառական մոտեցում (10 միավոր). որքանո՞վ է նախագիծը խթանում ներառական մոտեցումը և վերը նշված խմբերի ակտիվ մասնակցությունը։

Ուղղորդող հարցեր.

- Նախագիծն ապահովո՞ւմ է արդյոք կանանց և/կամ երիտասարդների ակտիվ ու բովանդակալից մասնակցությունը։
- Համապատասխան դեպքերում՝ նախատեսո՞ւմ է արդյոք նախագիծը խոցելի, թերներկայացված կամ հեռավոր համայնքներում բնակվող մարդկանց ներգրավում։
- Արդյո՞ք ներառական մոտեցումը հաշվի է առնված նախագծի ամբողջ ընթացքում, այլ ոչ թե սահմանափակվում է առանձին գործողություններով։

ե) Կայունություն և երկարաժամկետ ազդեցություն (10 միավոր). որքա՞ն է հավանական, որ նախագիծը կունենա երկարաժամկետ ազդեցություն դրամաշնորհային աջակցության ավարտից հետո։

Ուղղորդող հարցեր.

- Ի՞նչ քայլեր եք նախատեսում նախագծի արդյունքների պահպանման և հետագա զարգացման համար նախագծի ավարտից հետո։
- Արդյո՞ք նախագիծը նպաստում է երկարաժամկետ գործընկերությունների, համագործակցության ցանցերի ու մեխանիզմների կամ ինստիտուցիոնալ կապերի ձևավորմանը
- Արդյո՞ք տեղական գործընկերներն ու շահառուները պատրաստ են շարունակել, պահպանել և զարգացնել ծրագրի ձեռքբերումները։

Դրամաշնորհի տրամադրմանը նախորդող և հաջորդող գործընթացներ

Ֆինանսավորման վերաբերյալ որոշումը կայացնելուց մինչև ընտրված նախագծերի մեկնարկը կարող է տևել մինչև մեկ ամիս։

ԵՀՀ աշխատակիցները ընտրված կազմակերպությունների հետ կանցկացնեն առցանց կամ դեմ առ դեմ հարցազրույցներ (Pre-award Interview)՝ գնահատելու կազմակերպության կարողությունները և բացահայտելու նախագծի արդյունավետ իրականացման և ֆինանսական կառավարման հնարավոր ռիսկերը։

Եթե հարցազրույցի ընթացքում պարզվի, որ հայտատուն չունի նախագիծն իրականացնելու համար անհրաժեշտ կարողություններ կամ ռեսուրսներ, ֆինանսավորման վերաբերյալ որոշումը կարող է վերանայվել:

Ընտրված կազմակերպությունները պարտադիր պետք է մասնակցեն նաև ԵՀՀ-ի կողմից կազմակերպվող Դրամաշնորհների կառավարման սեմինարին (Grants Management Seminar) : Սեմինարի ընթացքում կներկայացվեն դրամաշնորհային ծրագրի ֆինանսական կառավարման, հաշվետվությունների ներկայացման, տեսանելիության, գնումների, հաղորդակցության հետ կապված ծրագրի հիմնական պահանջները:

Գնահատման գործընթացի վերջնական փուլում ընտրված կազմակերպությունները ԵՀՀ-ի հետ կստորագրեն դրամաշնորհային պայմանագիր:

Նախագծի իրականացման ողջ ընթացքում կազմակերպությունները պարբերաբար պետք է ներկայացնեն ծրագրային և ֆինանսական հաշվետվություններ: Դրամաշնորհային միջոցները կարող են տրամադրվել մի քանի փուլով՝ հաշվի առնելով ծրագրով նախատեսված գործողությունների պատշաճ իրականացումը, առաջընթացը և ներկայացված հաշվետվությունների որակը: ԵՀՀ-ն և Կոնսորցիումի մյուս անդամները կարող են իրականացնել մոնիթորինգային այցեր, առցանց հանդիպումներ կամ հարցազրույցներ՝ նախագծերի իրականացման ընթացքը գնահատելու նպատակով:

Դրամաշնորհային նախագծերը կընդգրկվեն ծրագրի արտաքին գնահատման գործընթացում, ուստի կազմակերպությունները պետք է համագործակցեն գնահատումն իրականացնող փորձագետների հետ: Բացի այդ, դրամաշնորհ ստացած կազմակերպությունները պետք է իրենց բյուջեներում նախատեսեն արտաքին ֆինանսական աուդիտի համար անհրաժեշտ ծախսերը:

Դրամաշնորհի կառավարման և մոնիթորինգի գործընթացից բացի, ԵՀՀ-ն և Կոնսորցիումի գործընկերները կաջակցեն դրամաշնորհառուներին մասնագիտական կապերի և համագործակցությունների զարգացման հարցերում, ինչպես նաև խորհրդատվություն կտրամադրեն ծրագրի շուրջ հանրային իրազեկման և հաղորդակցման վերաբերյալ:

ԵՀՀ-ն դրամաշնորհառուներին կընդգրկի իր տվյալների շտեմարանում՝ ծրագրի շրջանակում առկա նորությունների, հնարավորությունների և կարողությունների զարգացմանն ուղղված նախաձեռնությունների մասին տեղեկացնելու նպատակով:

Նախագծերի հանրայնացում և հաղորդակցություն

ԵՀՀ-ն և Կոնսորցիումի մյուս անդամները կաջակցեն դրամաշնորհառուներին նախագծերի հանրայնացման և հաղորդակցության հարցերում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր նախագծի առանձնահատկությունները։

Որպես կանոն, դրամաշնորհառուները պետք է նշեն, որ իրենց նախագիծն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ՝ «Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին. միջսահմանային կապերի ամրապնդում» ծրագրի շրջանակում։

Եթե Կոնսորցիումի կամ Եվրոպական միության կողմից այլ ցուցումներ չեն տրամադրվել, դրամաշնորհառուները պարտավոր են պահպանել Եվրոպական միության կողմից սահմանված հանրային հաղորդակցության և տեսանելիության պահանջները, որոնք ներկայացված են այս ուղեցույցում՝ Communicating and raising EU visibility: Guidance for external actions - 2022։

Դիմումի ներկայացման հիմնական պայմաններ

- Տեղեկատվական հանդիպում Հայաստանի հայտատուների համար՝ **հունիսի 29, 2026թ.**
- Տեղեկատվական հանդիպում Թուրքիայի հայտատուների համար՝ հունիսի **30, 2026թ.**
- Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ **հուլիսի 30, 2026թ.**
- Գնահատման գործընթացը՝ **2026 թվականի օգոստոս - սեպտեմբեր**
- Նախագծերի ակնկալվող մեկնարկը՝ **հոկտեմբերի 1, 2026թ**.
- Նախագծերի ավարտը՝ **2027 օգոստոսի 31-ը ներառյալ**
- Ներկայացվող առաջարկի բյուջեն՝ **10,000 - 60,000 եվրո**
- Հայտի լեզուն՝ **անգլերեն**

Ուշադրություն. Առցանց տեղեկատվական հանդիպմանը մասնակցելու համար հետաքրքրված կազմակերպությունները պետք է նախապես գրանցվեն՝ նամակ ուղարկելով grants@epfound.am հասցեին։ Գրանցված մասնակիցներին ԵՀՀ-ն պատասխան նամակով կտրամադրի Zoom հարթակի հղումը։

Հայտերի ներկայացման կարգը

Հայտատուները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Ծրագրային առաջարկ՝ համաձայն Հավելված 1-ում ներկայացված հայտի ձևի (*Annex 1: Proposal Form*) :
2. Ծրագրի բյուջե և բյուջեի հիմնավորում՝ համաձայն Հավելված 2-ում ներկայացված ձևի (*Annex 2: Budget*)։
3. Ծրագրային թիմի հիմնական անդամների ինքնակենսագրականները (CV)։

4. Կազմակերպության պետական գրանցման վկայականը։
5. Կազմակերպության կանոնադրություն։
6. [ըստ ցանկության] Լրացուցիչ փաստաթղթեր կամ նյութեր, որոնք հիմնավորում կամ ներկայացնում են կազմակերպության/թիմի նախորդ փորձը։

Գնահատման գործընթացը հաջողությամբ հաղթահարած և ֆինանսավորման համար ընտրված հայտատուները պիտի ներկայացնեն նաև հետևյալ փաստաթղթերը.

1. Տեղեկանք՝ հարկային պարտավորությունների բացակայության վերաբերյալ
2. Դրամաշնորհի կառավարման հարցաթերթիկ (Grants Management Questionnaire), որը կտրամադրվի ԵՀՀ-ի կողմից
3. Բանկի կողմից տրամադրված տեղեկանք կազմակերպության բանկային հաշիվների վերաբերյալ (Հայաստանում՝ ՀՀ դրամով և եվրոյով, Թուրքիայում՝ լիրայով և եվրոյով)։

Հայտադիմումը և պահանջվող փաստաթղթերը պետք է ներկայացվեն առցանց՝ հետևյալ հղումով **Application Form**.

Հարցերի դեպքում հայաստանյան հայտատուները կարող են գրել grants@epfound.am էլեկտրոնային հասցեին, իսկ Թուրքիայի հայտատուները՝ grants@hrantdink.org էլեկտրոնային հասցեին։

***

Սույն հայտարարությունը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվող՝ «Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին. միջսահմանային կապերի ամրապնդում» ծրագրի շրջանակում։ Հայտարարության բովանդակությունը կարող է չհամընկնել Եվրոպական միության տեսակետների հետ։